ԳԻՏԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆ՝ ՆՎԻՐՎԱԾ Ա. Ֆ. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 90-ԱՄՅԱԿԻՆ

Փետրվարի 4-ին Երևանում տեղի ունեցավ ՍՄԿԿ Կենտկոմին առընթեր մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի, Հայաստանի գիտությունների ակադեմիայի և Երևանի պետական համալսարանի համատեղ նստաշրջանը՝ նվիրված կոմունիստական կուսակցության և սովետական պետության ականավոր գործիչ, աննկուն լենինյան, հայ ժողովրդի արժանավոր զավակ Ա. Ֆ. Մյասնիկյանի ծննդյան 90-ամյակին։

Նստաշրջանը բացեց ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս Դ. Բ. Ղարիբջանյանը։ Նա Ալ. Մյասնիկյանին բնութագրեց որպես ականավոր կուսակցական, պետական և զինվորական գործչի, որին չափազանց բարձր են գնահատել Վ. Ի. Լենինը և կուսակցության նշանավոր գործիչները։ Դ. Ղարիբջանյանը շեշտեց Ալ. Մյասնիկյանի ինտերնացիոնալիզմը, ատելությունը ազգայնականության հանդեպ, նրա վաստակը Սովետական Հայաստանում տնտեսության, գիտության ու մշակույթի զարգացման գործում։ Վերջում նա անդրադարձավ Ալ. Մյասնիկյանի հիշատակը հավերժացնելու ուղղությամբ ձեռնարկված միջոցառումներին։

«Ա. Ֆ. Մյասնիկյանը կուսակցական և պետական գործիչ» թեմայով զեկուցեց պատմական գիտությունների դոկտոր Ա. Ն. Մնացականյանը։ Նա ասաց, որ Ալ. Մյասնիկյանը 1904 թ. ընդգրկվելով հեղափոխական շարժման մեջ, 1906 թ. ընդունվեց ՌՍԴԲԿ շարքերը և մինչև իր կյանքի վերջը հավատարմորեն ծառայեց կուսակցության վեհ գործին։

Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին զորակոչվելով ցարական բանակ, նա խորանում է ռազմական արվեստի մեջ, աճում ու կոփվում է որպես մարտիկ-բոլշևիկ և որպես ռազմական գործին գիտակ հրամանատար։

Հսկայական է Ալ. Մյասնիկյանի դերը Բելոռուսիայում սովետական իշխանության հաղթանակի և Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության ստեղծման գործում։ Նա Բելոռուսիայի կոմունիստական կուսակցության Կենտրոնական բյուրոյի և Բելոռուսիայի Կենագործկոմի առաջին նախագահն է։ Զեկուցողը բերեց բազմաթիվ փաստեր, որոնք հավաստում են երիտասարդ բելոռուսական հանրապետության և նրա կոմունիստական կուսակցության ամրապնդման գործում Ալ. Մյասնիկյանի խազացած անգնահատելի դերը։

1919 թ. մարտի սկզբին, սպիտակգվարդիականների՝ դեպի Մոսկվա կատարած առաջխաղացման ծանր օրերին Ալ. Մյասնիկյանը աշխատանքի է ուղարկվում կուսակցության Մոսկվայի կոմիտե՝ որպես ռազմական կազմակերպիչ, որին ենթարկվում էր Մոսկվայի կայազորը։ 1919 թ. սեպտեմբերի 27-ին նա ընտրվում է կուսակցության Մոսկվայի կոմիտեի քարտուղար և մեր հայրենիքի մայրաքաղաքի համար այդ դժվարին օրերին եռանդուն կուսակցական-պետական ու գաղափարական գործունեություն ծավալում։

Ալ. Մյասնիկյանը, ասաց զեկուցողը, միշտ հետևում էր Հայաստանում և Անդրկովկասում տեղի ունեցող իրադարձություններին, հետաքրքրվում էր իր մայր ժողովրդի ճակատագրով և կյանքով։ Եվ պատահական չէ, որ երբ հայ ժողովրդի համար ծանր օրերին կուսակցության Կենտկոմը որոշեց Ալ. Մյասնիկյանին ուղարկել Հայաստան, նա անմիջապես շտապեց այնտեղ։ Մեկնելուց առաջ նա հանդամանալից զրույց ունեցավ Վ. Ի. Լենինի հետ։ Այդ զրույցի արդյունքն է Վ. Ի. Լենինի պատմական նամակը՝ ուղղված Կովկասի կոմունիստներին, որը տեղ հասցրեց Ալ. Մյասնիկյանը։ 1921 թ. մայիսի 4-ին Ալ. Մյասնիկյանը եկավ Երևան և ձեռնամուխ եղավ Հանրապետության Հեղկոմի նախագահի պարտականությունների կատարմանը, հանդիսանալով Հայաստանում կուսակցական-պետական աշխատանքի ընդհանուր ղեկավարը։ 1921 թ. նա հաստատվեց ՀՍՍՀ Ժողկոմսովետի նախագահ, ռազմական ժողկոմ և կուսակցության կովկասյան բյուրոյի Կենտկոմի անդամ։

Ալ. Մյասնիկյանը, շարունակեց զեկուցողը, մեծ երախտիք ունի նաև Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական բարեկամության ամրապնդման, Անդրֆեդերացիայի կազմավորման գործում։ Անդրֆեդերացիայի կազմավորումից հետո (1922) նա ընտրվեց ֆեդերացիայի Մշութենական խորհրդի նախագահ, ապա՝ կուսակցության Անդրերկրկոմի առաջին քարտուղար։ Ալ. Մյասնիկյանի ավանդը նշանակալից է նաև ՍՍՀՄ կազմավորման գործում, որի Կենտգործկոմի նախագահության անդամն էր մինչև կյանքի վերջը՝ 1925 թ. մարտի 22-ը։ Վերջում Ա. Մնացականյանը ասաց, որ Ալ. Մյասնիկյանը ոչ միայն խոշոր կուսակցական և պետական գործիչ էր, այլև մարքսիզմ-լենինիզմի տաղանդավոր պրոպագանդիստ, գրականագետ, հայ հասարակական մտքի ականավոր ներկայացուցիչ։

Պատմական գիտությունների դոկտոր Ա. Հ. Հարությունյանի զեկուցման թեման էր «Ա. Ֆ. Մյասնիկյանի զինվորական գործունեությունը»։ Ալ. Մյասնիկյանին, ասաց նա, իրավամբ կարելի է համարել սովետական պետության զինված ուժերի հիմնադիրներից ու կազմակերպիչներից մեկը։ Նրա եռանդուն ու բազմակողմանի գործունեությունը ռազմական շինարարության բնագավառում սկսվել է Հոկտեմբերյան հեղափոխությունից առաջ և շարունակվել մինչև նրա բովանդակալից կյանքի վերջը։ Զինվորական մասսաների շրջանում ունեցած հսկայական հեղինակությունը և հեղափոխության գործին անսահման նվիրվածությունը Ալ. Մյասնիկյանին հնարավորություն տվեցին Արևմտյան ռազմաճակատի II համագումարում (որի նախագահն էր նա) ընտրվելու Արևմտյան, իսկ հետո նաև Հարավ-արևմտյան ռազմաճակատների գլխավոր հրամանատար։ Նա եղել է նաև Արևելյան ռազմաճակատի գլխավոր հրամանատար։ Ալ. Մյասնիկյանը մեծ դեր է խաղացել նաև Մոգիլյովում տեղակայված ցարական հին զորակայանի շախշախման գործում, որը փորձում էր հակահեղափոխության բույն դառնալ։ Այնուհետև Ալ. Մյասնիկյանը նշանակվում է Գերագույն գլխավոր հրամանատարի տեղակալ, 1919 թ. դեկտեմբերին՝ պաշտոնակատար։ Ա. Հ. Հարությունյանը բազմաթիվ օրինակներով ցույց տվեց, թե Ալ. Մյասնիկյանը ինչպիսի հետևողականությամբ ու կրքոտությամբ էր պաշտպանում նոր բանակի ստեղծման լենինյան պլանը, համարձակորեն վեր հանում այդ գործում թույլ տրված սխալները։ Ալ. Մյասնիկյանն ակտիվորեն մասնակցել է Կարմիր բանակի մարտական կանոնագրքերի և ուղեցույցների մշակմանը, գրել ռազմական

շինարարության հարցերին նվիրված բազմաթիվ արժեքավոր հոդվածներ։ Ապա զեկուցողը պատմեց Մոսկվայում և հատկապես Հայաստանում Ալ. Մյասնիկյանի ծավալած անխոնջ զինվորական գործունեության մասին։ Վերջում Ա. Հ. Հարությունյանն ընդգծեց, որ ի դեմս Ալ. Մյասնիկյանի մեր կուսակցությունը, սովետական ժողովուրդը և նրա զինված ուժերը ունեին երկրի ռազմական շինարարության բոլոր բնագավառներում տեսական և պրակտիկ ամենաակտիվ մասնակցություն հանդես բերած ականավոր գործիչ։

«Ա. Ֆ. Մյասնիկյանի գրականագիտական ժառանգությունը» թեմայով զեկուցում կարդաց բանասիրական գիտությունների թեկնածու Գ. Ա. Սարգսյանը։ Նա ասաց, որ հավատարիմ լենինյան Ալ. Մյասնիկյանն իր կուսակցական, պետական և զինվորական գործունեությանը զուգընթաց զբաղվել է նաև գրական-հրապարակախոսական աշխատանքով և խոշոր ավանդ ներդրել հայ մարքսիստական գրաքննադատության մեջ։ Սկսած 1906 թ.՝ Ալ. Մյասնիկյանը հանդես է եկել որպես հրապարակախոս-քննադատ և շուրջ երկու տասնամյակ իր գրիչը ծառայեցրել է նոր կյանքի կառուցման համար մղվող պայքարին։ Առանձնապես արժեքավոր են նրա մտքերը Մ. Նալբանդյանի ու նրա ժամանակի, Ս. Նազարյանի ու Գ. Արծրունու, ինչպես նաև անցյալ դարի 80—90-ական թվականների արևելահայ պոեզիայի և նրա ականավոր ներկայացուցիչներ Հ. Հովհաննիսյանի, Ա. Ծատուրյանի և Հ. Թումանյանի վերաբերյալ։

Գ. Սարգսյանը հատկապես լայնորեն լուսաբանեց Ալ. Մյասնիկյանի հետհոկտեմբերյան շրջանի գրաքննադատական գործունեությունը։ Պաշտպանելով նոր, պրոլետարական-սոցիալիստական գրականության իրավունքը և հոգատարությամբ շրջապատելով նրա առաջին շինարարներին (Հ. Հակոբյան, Ե. Չարենց և այլն), Ալ. Մյասնիկյանը միաժամանակ վեր հանեց ու գնահատեց հայրենական մշակույթի առաջադիմական ավանդույթները, որոնց քննադատական յուրացումն ու օգտագործումը սովետահայ մշակույթի զարգացման գլխավոր նախապայմաններից մեկն է։

Վերջում զեկուցողը անդրադարձավ Ալ. Մյասնիկյանի գրականագիտական ժառանգության արդիական նշանակությանը և ցույց տվեց նրա կարևոր դերը սոցիալիստական կուլտուրայի զարգացման համար մղվող պայքարում։

Նստաշրջանի արդյունքներն ամփոփեց Գ. Ղարիբջանյանը։

Ա. Ի. ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ